Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

Բաղադրիչ Ա՝ Որակի կառավարում

Ա4.2 Մեթատվյալների հետևում

Ծրագրի մասնակիցներ
Յեսպեր Ելեմոսե Յենսեն, Դանիայի վիճակագրություն
Անեգրետե Վուլֆ, Դանիայի վիճակագրություն

Հայաստան 2012 թ. սեպտեմբերի 5-14-ը

Վերջնական Տարբերակ

Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն		Դանիայի վիճակագրական ծառայություն

Հեղինակների կոնտակտային տվյալներ

Յեսպեր Էլեմոսե Յենսեն
Դանիայի վիճակագրություն
Sejrøgade 11
DK2100 Copenhagen Ø
Tel. +45 3917 3244
jej@dst.dk

Անեգրետե Վուլֆ
Դանիայի վիճակագրություն
Sejrøgade 11
DK2100 Copenhagen Ø
Tel. +45 3917 3155
awu@dst.dk

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 3
2. Քայլեր և արդյունքներ
3. Եզրակացություններ և առաջարկներ 7
4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող քայլեր 7

Հավելվածներ

Հավելված 1.Տեխնիկական առաջադրանք 8
Հավելված 2.Առաքելության ծրագիր 9
Հավելված 3.Հանդիպումներ անձանց հետ 10
Հավելված 4.Մամուլի հաղորդագրություն 11

Առաքելության ընթացքում կամ որպես առաքելության արդյունք արձանագրված այլ արդյունքները

Հավելված A4.2.5 ARMSTATBANK.AM-ի վերաբերյալ Power Point ձևաչափով շնորհանդես
Հավելված A4.2.6 ARMSTATBANK.AM տեղեկատվական թերթիկ

Հապավումների ցանկ

ԱՊ Անդամ պետություն
ՀՀ ԱՎԾ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն
ՈԱԽ Որակի աշխատանքային խումբ

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն զեկույցը նախապատրաստվել է որպես ՀՀ ԱՎԾ –ում իրականացված առաքելության արդյունք: Այս առաքելությունը 2012 թ. ապրիլին իրականացված գործունեություն A4.1, որի մասնակիցներն էին Անեգրետե Վուլֆը և Յեսպեր Էլեմոսեն, շարունակություն էր: Առաքելության զեկույցը հասանելի է www.dst.dk/armenia կայք էջում: Ա 4.1 և Ա 4.2 գործունեությունների նպատակն էր PX-Web ծրագրային ապահովման հիման վրա աշխատող վիճակագրական տվյալների բազայի՝ www.armstatbank.am-ի ներդրումը:

ԱՊ փորձագետները ցանկանում է շնորհակալություն հայտնել բոլոր պաշտոնյաներին և անհատներին օժանդակության և տրամադրված արժեքավոր տեղեկատվության համար, ինչը ստացվել է Հայաստանում գտնվելու ընթացքում, և նպաստել աշխատանքի ընթացքի դյուրինացմանը:
www.armstatbank.am արդյունավետ ներդրումը տեղի ունեցավ 2012 թ. սեպտեմբերի 14-ին: Սա շատ տպավորիչ նվաճում էր ՀՀ ԱՎԾ-ի կողմից, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին, և դրա իրականացումը հնարավոր դարձավ ղեկավարության բարձր մակարդակի աջակցության, ինչպես նաև SS և վիչակագրության տեղեկատվության տարածման բաժնի նվիրված աշխատանքի շնորհիվ:

Զեկույցի մեջ ներկայացված հայացքները և դիտարկումները պատկանում են նշված փորձագետներին և դրանց համապատասխանությունը Դանիայի վիճակագրական ծառայությանը պարտադիր չէ:

2. Քայլեր և արդյունքներ

Առաքելության ընթացքում փորձագետները իրականացրել են հետևյալ գործողությունները՝

- Հանդիպում ԹՄԽ-ի և ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ՝ վերջին առաքելությունից հետո իրականացված աշխատանքի նկարագիրը և տվյալ առաքելության աշխատանքային ծրագրի համաձայնեցումը
- Լրացուցիչ վերապատրաստման ծառայությունների տրամադրում PX-Edit ծրագրային ապահովումը օգտագործելով PX- ֆայլերի լավագույնս արտադրության վերաբերյալ
- Շնորհանդեսի ներկայացում տվյալների տարածման և ճյուղային բաժինների ներկայացուցիչների համար armstatbank.am-ի աղյուսակներում մեթատվյալների չափանիշների վերաբերյալ
- Օժանդակություն ՀՀ ԱՎԾ-ին կազմված ֆայլերի որակական ստուգումներ կատարելու համար
- Օժանդակություն ՀՀ ԱՎԾ-ին PX-Web ծրագրային ապահովումը armstatbank.am –ին ադապտացնելու համար
- Աջակցություն www.armstatbank.am-ի վերաբերյալ լրագրողներին շնորհադեսի կազմման գործընթացում, ներառյալ տեղեկատվական թերթիկի մշակում
- Մասնակցություն լրագրողների հետ հանդիպմանը

Ստորև ներկայացված են որոշ գործողությունների մանրամասնությունները:

Վերապատրաստում

2012 թ. ապրիլին Ա 4.1 գործունեության ընթացքում տեղի ունեցավ վերապատրաստում PC-AXIS / PX-Edit և PX-Web վերաբերյալ (զեկույցը հասանելի է www.dst.dk/armenia կայք էջում): Համաձայն ապրիլ ամսին ձեռք բերած համաձայնության ՀՀ ԱՎԾ-ի կողմից ամռան ամիսների ընթացքում կազմվել էին մի շարք ֆայլեր: Դանիայի վիճակագրության կողմից ներկայացվեցին այդ ֆայլերին առնչվող դիտողությունները: Որոշ հարցերի լուծման համար դեռևս անհրաժեշտ էին լրացուցիչ պարզաբանումներ, քանի որ հիմնականում հմտությունները ձեռք են բերվում գործնական աշխատանքի, ինչպես նաև աշխատանքի ընթացքում վերապատրաստման ժամանակ, այդպիսով Ա4.2 առաքելության հիմնական ժամանակը նվիրված էր SS և վիճակագրական տեղեկատվության տարածման բաժինների հետ համատեղ գործնական աշխատանքին:

PX-Web տեղակայում

PX-Web առաջին անգամ տեղակայվեց ապրիլ ամսին, որից հետո հուլիս ամսվա կարճատև այցելության ընթացքում տեղակայվեց նոր dot.net տարբերակը: Նոր տարբերակը մատչելի է աշխատանքի համար և կարգավորումների մեծ մասը հնարավոր է հեշտորեն փոփոխել ադմինիստրատիվ ինտերֆեյսում: Սակայն, որոշ կարգավորումներ մինչդեռ հասանելի են միայն կոնֆիգուրացիայի ֆայլերի ձևաչափով: ՀՀ ԱՎԾ-ի կողմից հսկայական ջանքեր են գործադրվել PX-web-ի ինտերֆեյսը հայերեն թարգմանելու համար: Այն պահին, երբ օգտվողները սկսեն օգտվել www.armstatbank.am-ից, հնարավոր է կլինի ճշգրտել օգտվողի ինտերֆեյսի որոշակի տեքստեր:

Տեղակայվել է 2012 թ. PX-Web տարբերակը, որը առաջին dot.Net տարբերակն է և հնարավորություն է տալիս ստանալ համապատասխան գծապատկերներ: Այս տարբերակը դեռ պաշտոնապես գտվում է մշակման փուլում և, այդպիսով ՀՀ ԱՎԾ-ն առաջարկեց իրականցնել տեղակայման թարմացում, երբ Շվեդիայի վիճակագրությունը թողարկի վերջնական տարբերակը:

Հնարավոր է հեշտորեն փոփոխել գծապատկերի մոդուլի գույները: ARMSTATBANK.AM ներդրման համար համապատասխան գույները որոշվել են հիմնվելով դրանց վառ արտահայտչականության վրա: Առաջարկվում է մշակել համապատասխան ուղեցույց:

Մամլո ասուլիս

2012 թ. սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ մամլո ասուլիս: Հանդիպման ընթացքում ՀՀ ԱՎԾ-ի նախագահ Պրն. Մնացականյանը պաշտոնապես հայտարարեց ARMSTAT-BANK.AM ներդրման մասին: Դանիայի վիճակագրության տնօրեն Պրն. Լարս Տիգենսենը ներկայացրեց ընդհանուր շնորհանդես տվյալների բազայի արդյունավետության, արժեքի և ներկայացրեց դրա դերը ժամանակակից վիճակագրական ծառայություններում: (Սույն շնորհանդեսի սլայդերը ներկայացված են զեկույցի հավելված Ա4.2.4). Մամլո ասուլիսը ավելի ուշ լուսաբանվեց Հայաստանի ազգային հեռուստաալիքով, որի ընթացքում ներկայացվեց Պրն. Լարս Տիգենսենը հարցազրույցը (http://www.1tv.am/en/1347635112 Go to 6.17)

Տեղեկատվական թերթիկ

Մամլո ասուլիսի համար նախապատրաստվեց ARMSTATBANK.AM –ը նկարագրող տեղեկատվական թերթիկ հայերեն և անգլերեն լեզուներով (ներկայացված է հավելված 5-

ում): Մամլո ասուլիսի հետո սույն տեղեկատվական թերթիկները կօգտագործվեն որպես գովազդային նյութեր:

ARMSTATBANK.AM-ի հետագա զարգացումները

ՀՀ ԱՎԾ պատրաստվում է ընդարձագել ARMSTATBANK.AM –ը, և այդպիսով այն կպարունակի ՀՀ ԱՎԾ-ի կողմից արտադրվող ողջ վիճակագրական տեղեկատվությունը:

ARMSTATBANK.AM-ում PX ֆայլերի վերաբերյալ գործնական դիտարկումներ

Ստորև ներկայացված են www.armstatbank.am-ին առնչվող մի շարք գործնական դիտարկումներ: Այս դիտողությունները ընդհանուր են և ներկայացվել են www.armstatbank.am-ին ներդրման գործընթացին նախապատրաստվելիս:

Խուսափել մեծատառերի օգտագործումից

Ստորև ներկայացված պատկերում որոշ աղյուսակների անվանումները գրված են մեծատառերով և մնացածը՝ փոքրատառերով, ինչը շփոթմունք է առաջացնում այն դեպքում, երբ մեծատառերի և փոքրատառերի օգտագործումը համահունչ չէ: Որպես լավագույն լուծում առաջարկվում է հրաժարվել մեծատառերի օգտագործումից:



“Ցուցանիշը” հարմար անվանում չի հանդիսանում փոփոխականի համար

Անդրադառնալով վերը նշված աղյուսակին՝ մի շարք փոփոխականներ ունեն “ցուցանիշ” անվանումը: Սա շփոթմունք է առաջացնում օգտվողների մոտ , քանի որ նրանք կարող են կարծել, թե միևնույն փոփոխականը օգտագործվում է և բնակչության վիճակագրության և

ազգային հաշիվների մեջ: Բնակչության վիճակագրության օրինակում հնարավոր է անվանել ցուցանիշը՝ *բնակության վայր*:



Զգուշացեք տեղեկատվություն չպարունակող արժեքներից

Ժամանակահատվածի արժեքները չպետք է ներառել աղյուսակի մեջ, եթե տվյալները հասանելի չեն: Ստորև ներկայացված օրինակում փոփոխականի արժեքների վերաբերյալ չկա հասանելի որևէ տեեկատվություն: Այդպիսով, հարկավոր չէ ավելացնել ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվություն, մինչև դրա հասանելի լինելը: Տեսնելով 2011 արժեքը՝ օգտվողների մոտ կարծիք կստեղծվի, որ տեղեկատվությունը հասանելի է, և աղյուսակը սխալ է պարունակում:



Խուսափեք տասնորդականներից, եթե դրանց անհրաժեշտությունը չկա, կամ դրանք անտրամաբանական են

Ստորև նշված օրինակում ներկայացված են հայկական ֆիլմերը: Սակայն ակնհայտ է, որ դրանք ամբողջ թիվ են կազմում և պետք է ներկայացվեն որպես ամբողջ թիվ: Դուք չեք կարող ունենալ 3.23 ֆիլմեր, կա կինոթատրոններ:

Home - Menu - Selection - Presentation - Table

Edit and Calculate | Save As | Table - Layout 1

xls CSV

PRODUCTION OF MOVIES by Indicators and Years

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Finished movies, unit	22,0	11,0	21,0	20,0	17,0	23,0	19,0	30,0	40,0	39,0	30,0	37,0
Finished animation	2,0	0,0	3,0	3,0	4,0	3,0	3,0	5,0	4,0	5,0	4,0	5,0

Information

Unit
unit and mln. AMD

Creation date
20120710 05:55

3. Եզրակացություններ և առաջարկներ

Արդիականացումներ

Չափազանց կարևոր է , որ ՀՀ ԱՎԾ-ի բոլոր աշխատակիցները գիտակցեն, որ այն պահին, երբ աղյուսակը/ վիճակագրությունը ներառվում է www.armstatbank.am-ում, այն պետք է համապատասխանաբար արդիականացվի նախատեսված թողարկումների օրացույցին համապատասխան: ՀՀ ԱՎԾ-ի համբավը և վարկանիշը կտուժեն, այն դեպքում, եթե Ինտերնետում հնարավոր չլինի գտնել վերջին թարմ տվյալները: Այլ վիճակագրական ծառայությունների փորձին համաձայն՝ չկա հետադարձ Ինտերնետ հրապարակումներից :

Առաջարկություններ

Կիրառելի են հետևյալ առաջարկությունները՝

- Կազմել պարզ հղում ՀՀ ԱՎԾ-ի պաշտոնական կայք էջից www.armstatbank.am
- Շարունակել PX ֆայլերի արտադրությունը – մշակել հստակ պլան մինչև 2012 թ. տարվա վերջը առկա PX files քանակի վերաբերյալ, օրինակ՝ մինչև դեկտեմբերի կեսը ունենալ 40 աղյուսակ
- Նախագծել ավելի խոշոր աղյուսակներ: Սա օգտվողներին հնարավորություն կտա ընտրություններ կատարել իրենց կարիքներին համապատասխան: Հրապարակումների համար ավելի փոքր աղյուսակները կարելի է ստեղծել այդ խոշոր աղյուսակներից:
- Որոշել բոլոր ոլորտների առկայության ժամանակահատվածը www.amstatbank.am
- Որոշել, որ amstatbank.am պետք է արդիականացվի պարբերական վիճակագրության թարմացումների հետ համատեղ
- Մշակել ընթացակարգ ապահովելու համար աղյուսակների մեջ համապատասխան որակի հռչակագրին հղումի առկայությունը
- Օգտագործել տեղեկատվական թերթիկը որպես գովազդային նյութ
- Մտապահել այլ տեղեկատվական թերթիկի մշակումը, որի մեջ ավելի մանրամասն նկարագրված կլինի armstat.am աշխատանքը
- Ապահովել պատշաճ պատճենման ընթացակարգեր
- Մասնակցել PC-Axis միջազգային հանդիպումներին, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն կարողանա ազդեցություն ունենալ ծրագրային ապահովման հետագա զարգացումների վրա:

4. Հաջորդ գործունեությունից առաջ իրականացվող քայլեր

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սա վերջին գործունեություն էր Ա բաղադրիչի շրջանակում նվիրված տվյալների ներկայացմանը Ինտերնետում, ալևս չկան որևէ գործողություններ, որոնք առնչվում են Ա4.1 and Ա4.2 գործունեություններին և պետք է իրագործվեն Թվինինգ նախագծի շրջանակում ՀՀ ԱՎԾ –ի կողմից:

Այնուամենայնիվ, ՀՀ ԱՎԾ դեռ նոր է սկսել է թղթային տարբերակ հրապարակումներից անցում կատարել էլեկտրոնային ձևաչափին: Այսպիսով, պետք է պլաններ մշակվեն www.armstatbank.am-ի հետագա զարգացումների համար:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

ԵՄ Թվինինգ ծրագիր

Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական ծառայությանը Թվինինգ Ծրագրի միջոցով AM09/ENP-PCA/TP/04

<u>Նախագիծ</u> Տեխնիկական առաջադրանք (Ա.4.2) Սեպտեմբերի 5-14, 2012

Բաղադրիչ Ա	***Որակի Կառավարում***
Բաղադրիչ Բ	Բիզնես ռեգիստր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն
Բաղադրիչ Գ	ՀՆԱ –ի ամբողջականության բարելավում
Բաղադրիչ Դ	Գյուղատնտեսության Համատարած Հաշվառում
Բաղադրիչ Ե	Հարմոնիզացված Սպառողական Գների ինդեքս
Բաղադրիչ Զ	ՏՀՏ Հանրություն

Գործունեություն Ա4.2 Աշխատակիցների վերապատրաստում (2)

1. Գործունեության նպատակը

Սույն գործունեությունը հանդիսանում է Ա4.1 գործունեության շարունակությունը, որի ընթացքում տեղի է ունեցել PX Web / PC Axis տարածման ծրագրային ապահովման տեղակայումը և նախաձեռնվել է ինտեգրացված տվյալների բազան: Ա4.2 գործունեության ընթացքում կշարունակվի նշված գործընթացը:

2. Գործունեության ակնկալվող արդյունքները

Գործունեության ակնկալվող արդյունքներն են՝

- PX-Web աշխատանքը ՀՀ ԱՎԾ –ի սերվերում;
- Փորձարկման ընթացակարգերի իրականացում;
- Ավարտել և ապահովել 25 տվյալների ֆայլերի որակը;
- Ներածական նյութեր;
- Տվյալների ֆայլերի արտադրման ժամանակացույցը մյուս վիճակագրությունների համար;
- Անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթավորման նկարագիր (ՀՀ ԱՎԾ-ի ներքին օգտագործման);

- PC Axis ծրագրի ներկայացումը հանրությանը առանձին մամուլի միջոցառման միջոցով:

3. Ծրագրի մասնակիցները

Պրն. Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ (*ՇԵ բաղադրիչի ղեկավար*)
Անահիտ Սաֆյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ

Անեգրետ Վուլֆ, Տվյալների տարածման բաժնի ղեկավար, Դանիայի վիճակագրություն
Յեսփեր Էլեմոս Յենսեն, Միջազգային համագործակցության բաժնի ավագ խորհրդատու, Դանիայի վիճակագրություն

ՀՀ ԱՎԾ-ի այլ աշխատակիցներ, որոնք մասնակցում են սույն գործունեությանը

Գագիկ Անանյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ
Վանուշ Դավթյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ, SS պատասխանատու,
Նարինե Մուշեղյան, Տվյալների տարածման բաժնի պետ
Վլադիմիր Օբոյանցև, SS Վարչության պետ

4. ԱՊ փորձագետների հանդիպման ծրագիրը, Սեպտեմբերի 5-14, 2012

Տիկին Վուլֆը կաշխատի սեպտեմբերի 5-7-ը, + 10-ին + 14-ին
Պարոն Յենսենը կաշխատի Սեպտեմբերի 10-14-ը:

Ժամը	Վայրը	Միջոցառումը	Նպատակը/մանրամասները
Չորեքշաբթի, 5 սեպ. առավոտյան	Կոնգրես Հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ-ի հետ	Շաբաթվա ծրագրի քննարկում
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և փորձագետներ ի հետ	Ներկայիս կարգավիճակի ներկայացում և շաբաթվա ծրագրերի հաստատում
Հինգշաբթի, 6 սեպ.- Հինգշաբթի, 13 սեպ.	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում SS պատասխանա տուի և աշխատակից ների հետ	PX Web/PC Axis ծրագրի տեղակայում Փորձարկում/ ընդգծված փորձարկում 25 տվյալների ֆայլերի ավարտում Արտաքին փաստաթղթավորման արտադրում Ներքին փաստաթղթավորման արտադրում Մամուլի միջոցառման մանրամասն ծրագրի կազմում Տվյալների Ֆայլերի ավարտի ժամանակացույցը
Ուրբաթ, 14 սեպ. առավոտյան	ԵՄՊ	Մամուլի միջոցառում PC Axis ներդրումը	Ներկայացնել PC Axis ծրագիրը վիճակագրական տվյալների Հայաստանյան սպառողներին
կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Բրիֆինգ ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ, որոշումներ և առաջարկություններ: Հետևանքները հաջորդ առաքելության համար և ՇԵ փորձագետների ենթադրելի աշխատանքային ծրագիրը:

Հավելված 3. Հանդիպումներ անձանց հետ

Պրն. Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ (*ՇԵ բաղադրիչի ղեկավար*)
Անահիտ Սաֆյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ
Վանուշ Դավթյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ, SS պատասխանատու,
Նարինե Մուշեղյան, Տվյալների տարածման բաժնի պետ

Վլադիմիր Օբոյանցև, ՏՏ Վարչության պետ
Աիդա Մարտիրոսյան, ՏՏ զարգացման բաժին

Հավելված 4. Մամուլի հաղորդագրություն

Մամուլի հաղորդագրություն

Երևան 2012 թ. սեպտեմբեր

ԵՄ ծրագիրը վիճակագրությունը հասանելի է դարձնում ինտերնետում

2012 թ. սեպտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) և <<Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգի միջոցով>> ԵՄ ծրագիրը հանրությանը կներկայացնեն ARMSTATBANK.AM տվյալների նոր բազան:

ARMSTATBANK.AM –ը հնարավորություն կտա վիճակագրության բոլոր սպառողներին ներբեռնել վիճակագրական տվյալները իրենց իսկ նախընտրելի ձևաչափերով: Տեխնոլոգիայի հիմքում ընկած է օգտվողի համար շատ հարմարավետ PX-Web ծրագիրը, որը մշակվել է Շվեդիայի վիճակագրության կողմից և օգտագործվում է ավելի քան 40 ազգային վիճակագրական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ամբողջ աշխարհում:

ARMSTATBANK.AM –ը թույլ է տալիս ընտրել Ձեզ հետաքրքրող աղյուսակները և ցուցանիշները շատ պարզ ընթացակարգով՝

Ընտրել համապատասխան վիճակագրության ոլորտը ... և փոփոխականները և արժեքները ... և ստանալ տվյալները Ձեր նախընտրելի ձևաչափով





ARMSTATBANK.AM –ը տրամադրում է արագ և մատչելի հասանելիություն վիճակագրական տեղեկատվությանը, և հնարավորություն է տալիս ներբեռնել տվյալները MS Excel, xml կամ այլ ձևաչափերով, ինչպես նաև ստեղծել գծապատկերներ և աղյուսակներ, որոնք կառուցված են Ձեր իսկ սեփական կարիքների համապատասխան: Ծրագրի ներդրման մի մասը կլինի ARMSTATBANK.AM –ի ուղղակի ցուցադրումը հանրությանը:

<<Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը>> Թվինինգ ծրագրի տևողությունը երկու տարի է և այն միտված է Հայաստանի վիճակագրության մի շարք ոլորտների ներդաշնակեցմանը Եվրոպական Միության ստանդարտներին:

Հանդիպում լրատվամիջոցների հետ

Ժամը	10:30 սեպտեմբերի 14, 2012 (գրանցումը սկսվում է ժամը 10:00-ից)
Վայրը	Կառավարության 3-րդ շենք, 6 հարկ, ՀՀ ԱՎԾ հանդիպումների դահլիճ